

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)			[2] Սերիա	[3] Համար
20	Դեկտեմբեր	2019 թ.				Բ	1759780932
[4] Մատուցման ամսաթիվը						Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
20	Դեկտեմբեր	2019 թ.				Սերիա	Համար
						Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ	
Պայմանագիր			[5] Կնքման ամսաթիվ			[6] Համար	
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)							
[7.1] ՀԴՄ կտրոնի համար							

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի								
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	0	1	0	6	3	3	7
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[10] Անվանումը	ԿՐԹԱՐԱՆ ՍՈՆԱ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)							
[11] Բանկային տվյալները	Այրի Բանկ ՓԲԸ			N 11813000406200				
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ Բաղրամյան 71 16							
[13] Լրացուցիչ տվյալներ								

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի								
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	5	0	6	6	3	4
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[16] Անվանումը	«ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ» Պետական կառավարչական հիմնարկ							
[17] Բանկային տվյալները	ՀՀ Ֆին. Նախ. աշխ. գործ. վարչ.			N 900011180081				
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ Խորհրդարանի 6							
[19] Լրացուցիչ տվյալներ								
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն							
	Լիազորագիր	Համար	Ամսաթիվ					

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը						
№№ Շ/Գ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ծախսանակարգը	Միավորի գինը	Ձեռք(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Թարգմանչական ծառայություն՝ հայերենից ռուսերեն գրավոր	էջ	6	1100		6600
2	Թարգմանչական ծառայություն՝ հայերեն-ռուսերեն -հայերեն բանավոր	րոպե	155	83.33		12916.15
3	Թարգմանչական ծառայություն՝ հայերենից պարսկերեն գրավոր	էջ	18	2000		36000
4	Թարգմանչական ծառայություն՝ հայերեն - պարսկերեն - հայերեն բանավոր	րոպե	75	100		7500
5	Թարգմանչական ծառայություն՝ լեհերենից հայերեն գրավոր	էջ	1	4500		4500
6	Թարգմանչական ծառայություն՝ հունարենից հայերեն գրավոր	էջ	43	4500		193500
7	Թարգմանչական ծառայություն՝ հայերենից ռուսերեն գրավոր	էջ	9	1100		9900
8	Թարգմանչական ծառայություն՝ ռուսերենից հայերեն գրավոր	էջ	1	1100		1100
9	Թարգմանչական ծառայություն՝ ռուսերենից հայերեն գրավոր	էջ	3	1100		3300
10	Թարգմանչական ծառայություն՝ հայերենից ռուսերեն գրավոր	էջ	3	1100		3300
11	Թարգմանչական ծառայություն՝ հայերենից ռուսերեն գրավոր	էջ	10	1100		11000
Ընդամենը						289616.15

Մարայություն
մատուցող
(աշխատանք
կատարող)

HOVHANNISYAN SONA 5808870623

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

20/12/2019 19:13:00

Մարայություն
(աշխատանք
ստացող)

GRIGORYAN SUSANNA 7403690397

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

24/12/2019 17:58:32

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թարգմանիչ հրավիրելու մասին

20 դեկտեմբերի 2019թ.

քաղաք Երևան

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական Ա.Գ. Կոստանդյանս, քննարկելով Հանրապետության քրեական օրենսգրքի 168-րդ հոդվածի 2-րդ մասի մեղադրանքով ՌԻՏԿՈՒՐ ՍԱՄԱՐՈՎԻ նույն ինքը՝ ՌՌԻՍԼԱՆ ՏՈՒՐԱԿՈՒԼՈՎԻ՝ ՌՌԻՍԼԱՆ ՏՈՒՐԱԿՈՒԼՈՎԻն հանձնելու համար կալանավորման ժամկետն երկարաձգելու մասին Երևան քաղաքի ընդհանուր իրավասություն դատարանի 2019 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԴ/1049/06/19 որոշումը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ոստիկանության Երևան քաղաքի վարչության «Չվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի աշխատակիցների կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում 01.10.2019թ. հայտնաբերվել և ժամը 05⁰⁰-ին բերման է ենթարկվել խարդախություն կատարելու համար Ուզբեկստանի Հանրապետության (ՈւՀ) իրավասու մարմինների կողմից հետախուզվող ՌԻՏԿՈՒՐ ՍԱՄԱՐՈՎԻ (ՄՏՔՐ ՏԱՄԱՐՈՎ, 26.08.1983թ.ծ., նույն ինքը՝ ՌՌԻՍԼԱՆ ՏՈՒՐԱԿՈՒԼՈՎ, ՏՈՒՐԱԿՈՒԼՈՎ, RUSLAN TURAKULOV, 26.08.1983թ.ծ., 26.09.1983թ.ծ.):

Նույն օրը՝ ժամը 08⁰⁰-ին Ու.ՍԱՄԱՐՈՎԸ (Ռ. ՏՈՒՐԱԿՈՒԼՈՎ) ձերբակալվել և տեղափոխվել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁՊԿ:

ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության «Չվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի 01.10.2019թ. գրությամբ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազություն է ուղարկվել Ու.ՍԱՄԱՐՈՎԻ (Ռ. ՏՈՒՐԱԿՈՒԼՈՎ) ձերբակալման մասին փաստաթղթերի փաթեթը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2019 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ ԵԴ/0923/06/19 որոշմամբ բավարարվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության նույն օրվա միջնորդությունը ՌՌԻՍԼԱՆ ՏՈՒՐԱԿՈՒԼՈՎԻ, նույն ինքը՝ ՌԻՏԿՈՒՐ ՍԱՄԱՐՈՎԻ նկատմամբ 30 (երեսուն) օր ժամկետով ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2019 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ ԵԴ/1049/06/19 որոշմամբ բավարարվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության 2019 թվականի հոկտեմբերի 24-ի միջնորդությունը ՌՌԻՍԼԱՆ ՏՈՒՐԱԿՈՒԼՈՎԻ, նույն ինքը՝ ՌԻՏԿՈՒՐ ՍԱՄԱՐՈՎԻ նկատմամբ հանձնելու համար 2 (երկու) ամիս ժամկետով կալանավորում կիրառելու մասին:

Հաշվի առնելով, որ ՌՌԻՍԼԱՆ ՏՈՒՐԱԿՈՒԼՈՎԻ, նույն ինքը՝ ՌԻՏԿՈՒՐ ՍԱՄԱՐՈՎԻ կալանավորման ժամկետը լրանում է 2019 թվականի դեկտեմբերի 12-

ին՝ ժամը 05⁰⁰-ին, մինդեռ անհրաժեշտ է ապահովել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 479-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ վերջինիս և նրա շահերի պաշտպանների կողմից հանձնման թույլտվության վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի 2019 թվականի դեկտեմբերի 10-ի որոշման հետագա բողոքարկման իրավունքը, որից հետո անդրադառնալ Ուզբեկստանի Հանրապետության իրավասու մարմիններին վերջինիս փոխանցման հարցին, 2019 թվականի դեկտեմբերի 16-ին միջնորդություն է ներկայացվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ ՌԻՏԿՈՒՐ ՍԱՄԱՐՈՎԻ նույն ինքը՝ ՌՌԻՍԼԱՆ ՏՈՒՐԱԿՈՒԼՈՎ, ՏՈՒՐԱԿՈՒԼՈՎ հանձնելու համար կալանավորման ժամկետն երկարացնելու մասին:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասություն դատարանի 2019 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԴ/1049/06/19 որոշմամբ բավարարվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության 2019 թվականի դեկտեմբերի 16-ի միջնորդությունը ՌՌԻՍԼԱՆ ՏՈՒՐԱԿՈՒԼՈՎԻ, նույն ինքը՝ ՌԻՏԿՈՒՐ ՍԱՄԱՐՈՎԻՆ հանձնելու համար կալանավորման ժամկետը 2 (երկու) ամիս ժամկետով երկարաձգելու մասին:

2019 թվականի հոկտեմբերի 24-ի միջնորդություն է ներկայացվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասություն դատարան ՌԻՏԿՈՒՐ ՍԱՄԱՐՈՎԻ նույն ինքը՝ ՌՌԻՍԼԱՆ ՏՈՒՐԱԿՈՒԼՈՎԻ նկատմամբ հանձնելու համար կալանավորում կիրառելու մասին, ինչը Երևան քաղաքի ընդհանուր իրավասություն դատարան 2019 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ ԵԴ/1049/06/19 որոշմամբ բավարարվել է և որոշումը հանձնվել է կողմերին:

Հաշվի առնելով, որ ՌՌԻՍԼԱՆ ՏՈՒՐԱԿՈՒԼՈՎԻ, նույն ինքը՝ ՌԻՏԿՈՒՐ ՍԱՄԱՐՈՎԻ կալանավորման ժամկետը լրանում է 2019 թվականի դեկտեմբերի 12-ին՝ ժամը 05⁰⁰-ին, մինդեռ անհրաժեշտ է ապահովել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 479-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ վերջինիս և նրա շահերի պաշտպանների կողմից հանձնման թույլտվության վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի 2019 թվականի դեկտեմբերի 10-ի որոշման հետագա բողոքարկման իրավունքը, որից հետո անդրադառնալ Ուզբեկստանի Հանրապետության իրավասու մարմիններին վերջինիս փոխանցման հարցին, 2019 թվականի դեկտեմբերի 16-ին միջնորդություն է ներկայացվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ ՌԻՏԿՈՒՐ ՍԱՄԱՐՈՎԻ նույն ինքը՝ ՌՌԻՍԼԱՆ ՏՈՒՐԱԿՈՒԼՈՎ, ՏՈՒՐԱԿՈՒԼՈՎ հանձնելու համար կալանավորման ժամկետն երկարացնելու մասին:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասություն դատարանի 2019 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԴ/1049/06/19 որոշմամբ բավարարվել է ՌԻՏԿՈՒՐ ՍԱՄԱՐՈՎԻՆ նույն ինքը՝ ՌՌԻՍԼԱՆ ՏՈՒՐԱԿՈՒԼՈՎԻՆ հանձնելու համար կալանավորման ժամկետն երկարաձգելու մասին Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության միջնորդությունը:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության լեզուն հայերենն է:

Հաշվի առնելով, որ Արմինե Մինասյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած

չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. ՌԻՏԿՈՒՐ ՍԱՄԱՐՈՎԻ նույն ինքը՝ ՌՌԻՍԼԱՆ ՏՈՒՐԱԿՈՒԼՈՎԻ՝ ՌՌԻՍԼԱՆ ՏՈՒՐԱԿՈՒԼՈՎԻՆ հանձնելու համար կալանավորման ժամկետն երկարաձգելու մասին Երևան քաղաքի ընդհանուր իրավասություն դատարանի 2019 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԴ/1049/06/19 որոշումը նրան հասու լեզվով հանձնելու համար ռուսերեն գրավոր հաստատված թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Արմինե Մինասյանին (անձնագիր՝ AN սերիայի թիվ 0213064, տրված 24. 07. 2012թ., 004-ի կողմից, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 09. 07. 2012թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Վարչական շրջանի դատախազի
տեղակալ, արդարադատության
առաջին դասի խորհրդական



Ա. Կոստանդյան

Սրացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարասխանաբերության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝ *Armine Minasyan* «ԲԶ»..... 12 2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թարգմանիչ հրավիրելու մասին

18 դեկտեմբերի 2019թ.

քաղաք Երևան

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական Ա.Գ. Կոստանոյանս, ուսումնասիրելով Ուզբեկստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 168-րդ հոդվածի 2-րդ մասի մեղադրանքով հետախուզման մեջ գտնվող ՌՌԻՍԼԱՆ ՏՈՒՐԱԿՈՒԼՈՎԻ, նույն ինքը՝ ՌԻՏԿՈՒՐ ՍԱՄԱՐՈՎԻ կալանավորման ժամկետն երկարաձգելու մասին միջնորդությունը.

ՊԱՐԶԵՑԻ՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ոստիկանության Երևան քաղաքի վարչության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի աշխատակիցների կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում 01.10.2019թ. հայտնաբերվել և ժամը 05⁰⁰-ին բերման է ենթարկվել խարդախություն կատարելու համար Ուզբեկստանի Հանրապետության (ՈւՀ) իրավասու մարմինների կողմից հետախուզվող ՌԻՏԿՈՒՐ ՍԱՄԱՐՈՎԻ (ՍՏԿՈՒՐ ՍԱՄԱՐՈՎԻ, 26.08.1983թ.ծ., նույն ինքը՝ ՌՌԻՍԼԱՆ ՏՈՒՐԱԿՈՒԼՈՎ, ՏՈՒՐԱԿՈՒԼՈՎ, RUSLAN TURAKULOV, 26.08.1983թ.ծ., 26.09.1983թ.ծ.):

Նույն օրը՝ ժամը 08⁰⁰-ին Ու.ՍԱՄԱՐՈՎԸ (Ռ. ՏՈՒՐԱԿՈՒԼՈՎ) ձերբակալվել և տեղափոխվել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁՊՎ:

ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի 01.10.2019թ. գրությամբ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազություն է ուղարկվել Ու.ՍԱՄԱՐՈՎԻ (Ռ. ՏՈՒՐԱԿՈՒԼՈՎ) ձերբակալման մասին փաստաթղթերի փաթեթը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2019 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ ԵԴ/0923/06/19 որոշմամբ (դատավոր Մ. Մարտիրոսյան) բավարարվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության նույն օրվա միջնորդությունը ՌՌԻՍԼԱՆ ՏՈՒՐԱԿՈՒԼՈՎԻ, նույն ինքը՝ ՌԻՏԿՈՒՐ ՍԱՄԱՐՈՎԻ նկատմամբ 30 (երեսուն) օր ժամկետով ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2019 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ ԵԴ/1049/06/19 որոշմամբ (դատավոր Ա. Մաթևոսյան) բավարարվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի

դատախազության 2019 թվականի հոկտեմբերի 24-ի միջնորդությունը ՌՌՒՍԼԱՆ ՏՈՒՐԱԿՈՒԼՈՎԻ, նույն ինքը՝ ՌԻՏԿՈՒՐ ՍԱՄԱՐՈՎԻ նկատմամբ հանձնելու համար 2 (երկու) ամիս ժամկետով կալանավորում կիրառելու մասին:

Հաշվի առնելով, որ ՌՌՒՍԼԱՆ ՏՈՒՐԱԿՈՒԼՈՎԻ, նույն ինքը՝ ՌԻՏԿՈՒՐ ՍԱՄԱՐՈՎԻ կալանավորման ժամկետը լրանում է 2019 թվականի դեկտեմբերի 12-ին՝ ժամը 05⁰⁰-ին. մինչդեռ անհրաժեշտ է ապահովել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 479-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ վերջինիս և նրա շահերի պաշտպանների կողմից հանձնման թույլտվության վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի 2019 թվականի դեկտեմբերի 10-ի որոշման հետագա բողոքարկման իրավունքը, որից հետո անդրադառնալ Ուզբեկստանի Հանրապետության իրավասու մարմիններին վերջինիս փոխանցման հարցին. 2019 թվականի դեկտեմբերի 16-ին միջնորդություն է ներկայացվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ ՌԻՏԿՈՒՐ ՍԱՄԱՐՈՎԻ նույն ինքը՝ ՌՌՒՍԼԱՆ ՏՈՒՐԱԿՈՒԼՈՎ, ՏՈՒՐԱԿՈՒԼՈՎ հանձնելու համար կալանավորման ժամկետն երկարացնելու մասին, որի դատական նիստը նշանակվել է 2019 թվականի դեկտեմբերի 18-ին՝ ժամը 14⁰⁰-ին:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության լեզուն հայերենն է:

Հաշվի առնելով, որ ՌԻՏԿՈՒՐ ՍԱՄԱՐՈՎԸ նույն ինքը՝ ՌՌՒՍԼԱՆ ՏՈՒՐԱԿՈՒԼՈՎԸ չի տիրապետում քրեական դատավարության լեզվին, իսկ Ծովինար Թորոսյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. ՌՌՒՍԼԱՆ ՏՈՒՐԱԿՈՒԼՈՎԻ, նույն ինքը՝ ՌԻՏԿՈՒՐ ՍԱՄԱՐՈՎԻ կալանավորման ժամկետն երկարաձգելու մասին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում միջնորդության ըննարկմանը բանավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես ոռուսերեն լեզվի բանավոր թարգմանիչ հրավիրել Ծովինար Խոսրովի Թորոսյանին (անձնագիր՝ ID CARD 002132918, տրված 23.06.2015թ., 004 կողմից, որոկավորման մասին ՀՀ ԱՆ կողմից 09.07.2012թ.տրված տեղեկանքը) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Վարչական շրջանի դատախազի
տեղակալ, արդարադատության
երկրորդ դասի խորհրդական



Ա. Կոստանոյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատախազության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝



«18» 12 2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

թարգմանիչ հրավիրելու մասին

11-ը դեկտեմբերի 2019թ.

ք.Երևան

«Վախճանի» գրականության ֆունդի մասին հաստատված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական Մ.Հակոբյանս, ուսումնասիրելով Սաիդ Մոհամմադի Ռեզաիի և Սաթար Մոհամմադի Ռահբարզարեի վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունից մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 84104519 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

2019 թվականի դեկտեմբերի 10-ին ՀՀ վախճանի ֆունդի մասին հաստատված հանցագործությունների գործերով վարչությունում մեղադրական եզրակացությամբ ստացվել է ՀՀ ՊԵԿ քննչական վարչության 3-րդ բաժնում քննված թիվ 84104519 քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Սաիդ Մոհամմադի Ռեզաիի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 267.1-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով և Սաթար Մոհամմադի Ռահբարզարեի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 38-267.1-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով և 268-րդ հոդվածի 1-ին մասով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարությանը մասնակցող անձինք, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովում են հայերեն թարգմանությունը: Քրեական դատավարությանը մասնակցող մեղադրյալին, եթե նա չի տիրապետում հայերենին, դատարանը պարտավոր է պետական միջոցների հաշվին ապահովել թարգմանչի ծառայություններով, բացառությամբ երբ մեղադրյալը ցանկանում է իր հաշվին ապահովել թարգմանությունը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին և պաշտպանին հանձնվում են թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները»:

Նկատի ունենալով, որ սույն քրեական գործով մեղադրական եզրակացությունը ենթակա է հաստատման, իսկ մեղադրյալներ Սաիդ Մոհամմադի Ռեզաին և Սաթար Մոհամմադի Ռահբարզարեն հայերեն լեզվին չեն տիրապետում, այլ տիրապետում են պարսկերեն լեզվին և իրենց հաշվին թարգմանություն ապահովելու ցանկություն չեն հայտնել, ուստի քրեական գործով կազմված մեղադրական եզրակացությունը՝ կից հավելվածներով և այն հաստատելու մասին որոշումը հայերենից պարսկերեն թարգմանելու և մեղադրյալներին հասկանալի լեզվով նրանց հանձնելու նպատակով անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել «Կրթարան Սոնա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Էմմա Կարենի Մանուկյանին (անձնագիր՝ AS 0263626, տրված՝ 06.07.2018թ., 011-ի կողմից, դիպլոմ A062710՝ տրված ԵՊՀ-ի կողմից՝ 16.06.2000թ.):

Էմմա Մանուկյանն ունի համապատասխան մասնագիտական կրթություն, ազատորեն տիրապետում է հայերեն և պարսկերեն լեզուներին, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում:

Վերոգրյալի հիման վրա, և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածներով և 277-րդ հոդվածի 4-րդ մասով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Սաիդ Մոհամմադի Ռեզաիի և Սաթար Մոհամմադի Ռահբարզարեի վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունում քննված և մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 84104519 քրեական գործով թարգմանություն իրականացնելու համար հրավիրել «Կրթարան Սոնա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Էմմա Կարենի Մանուկյանին (անձնագիր՝ AS 0263626, տրված՝ 06.07.2018թ., 011-ի կողմից, դիպլոմ A062710՝ տրված ԵՊՀ-ի կողմից՝ 16.06.2000թ.):

2. Էմմա Մանուկյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի պարտականություններին և իրավունքներին:

3. Էմմա Մանուկյանին նախազգուշացնել քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական՝



Մ. Հակոբյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝



Էմմա Մանուկյան

« 11 » հնվարտիսեբեր 2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թարգմանիչ հրավիրելու մասին

20 դեկտեմբերի 2019թ.

քաղաք Երևան

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական Ա.Գ. Կոստանոյանս, ուսումնասիրելով Իսլամական Հանրապետության (այսուհետ՝ ԻԻՀ) իրավասու մարմինների կողմից, այդ երկրի «Կաշառքի, յուրացման և խարդախության կատարման համար պատժի խստացման մասին» օրենքի 1-ին հոդվածի հատկանիշներով նախատեսված հանցագործության (խարդախություն) կատարման համար հետախուզվող **ՇԱՀՆԱՄ ՀԱՇԵՄԻ ԱՍԳԱՐՓՈՒՐ ԹԱՐԻՆԻՆ** հանձնելու համար կալանավորման ժամկետն երկարաձգելու մասին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան ներկայացված միջնորդությունը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ոստիկանության Երևան քաղաքի վարչության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի աշխատակիցների կողմից 2019 թվականի հոկտեմբերի 12-ին՝ ժամը 06²⁰-ին, հայտնաբերվել, այնուհետև ժամը 09⁰⁰-ին ձերբակալվել և ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի ՁՊՎ է տեղափոխվել Իրանի Իսլամական Հանրապետության (այսուհետ՝ ԻԻՀ) իրավասու մարմինների կողմից, այդ երկրի «Կաշառքի, յուրացման և խարդախության կատարման համար պատժի խստացման մասին» օրենքի 1-ին հոդվածի հատկանիշներով նախատեսված հանցագործության (խարդախություն) կատարման համար միջազգային մակարդակով Ինտերպոլի «Կարմիր անկյունով» քարտի տեսքով հետախուզվող **ՇԱՀՆԱՄ ՀԱՇԵՄԻ ԱՍԳԱՐՓՈՒՐ ԹԱՐԻՆԸ (SHAHNAM HASHEM ASGARPOUR TARI, ծնված՝ 26.09.1980թ. 28.09.1980թ):**

ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի 2019 թվականի հոկտեմբերի 12-ի №15-1877 գրությամբ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազություն է ստացվել **ՇԱՀՆԱՄ ՀԱՇԵՄԻ ԱՍԳԱՐՓՈՒՐ ԹԱՐԻՆԻ** ձերբակալման մասին փաստաթղթերի փաթեթը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 14.10.2019թ. որոշմամբ **ՇԱՀՆԱՄ ՀԱՇԵՄԻ ԱՍԳԱՐՓՈՒՐ ԹԱՐԻՆԻ** նկատմամբ կիրառվել է ժամանակավոր կալանավորում՝ 30 օր ժամկետով:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 08.11.2019թ. որոշմամբ բավարարվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության միջնորդությունը՝ **ՇԱՀՆԱՄ ՀԱՇԵՄԻ ԱՍԳԱՐՓՈՒՐ ԹԱՐԻՆԻՆ** հանձնման համար 2 ամիս ժամկետով կալանավորելու վերաբերյալ:

Հաշվի առնելով, որ անհրաժեշտ է ժամանակ, **ՇԱՀՆԱՍ ՀԱՇԵՄԻ ԱՍԳԱՐՓՈՒՐ ԹԱՐԻՆԻ՝** ՀՀ-ում իրավական կարգավիճակը հստակեցնելու, հանձնման մասին միջնորդությունը քննարկելու և ՀՀ գլխավոր դատախազի կողմից համապատասխան որոշում կայացնելու համար, 2019 թվականի դեկտեմբերի 12-ին միջնորդություն է ներկայացվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի **ՇԱՀՆԱՍ ՀԱՇԵՄԻ ԱՍԳԱՐՓՈՒՐ ԹԱՐԻՆԻՆ** հանձնելու համար կալանավորելու ժամկետն երկարաձգելու վերաբերյալ:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության լեզուն հայերենն է:

Հաշվի առնելով, որ **ՇԱՀՆԱՍ ՀԱՇԵՄԻ ԱՍԳԱՐՓՈՒՐ ԹԱՐԻՆԸ** չի տիրապետում քրեական դատավարության լեզվին, իսկ Հրանուշ Թախմասյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. **ՇԱՀՆԱՍ ՀԱՇԵՄԻ ԱՍԳԱՐՓՈՒՐ ԹԱՐԻՆԻՆ** հանձնելու համար կալանավորելու ժամկետն երկարաձգելու վերաբերյալ միջնորդության պարսկերեն բանավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Հրանուշ Թախմասյանին (անձնագիր՝ AN սերիայի թիվ 0780981, տրված 22.12.2013թ., 029-ի կողմից, Երևանի պետական համալսարանի կողմից տրված դիպլոմ՝ PB սերիայի թիվ 013781, տրված 05.07.1990թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Վարչական շրջանի դատախազի
տեղակալ, արդարադատության
երկրորդ դասի խորհրդական

Ա. Կոստանդյան

Սրացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարասխանավորության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝ ըսմ

«20».....12..... 2019թ.

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

16.12.2019թ.

ք.Երևան

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության (Վարչություն) դատախազ Ա.Խաչատրյանս, ուսումնասիրելով №09121816 քրեական գործով հետախուզվող ԿԼԱՐԱ ՍԵՐՅՈՒՄՅՈՒ ԵՆՈՔՅԱՆԻՆ վերաբերյալ Վարչությունում սուկա փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) գլխավոր դատախազությունը «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի համաձայն 08.08.2019թ. դիմել է Լեհաստանի Հանրապետության (այսուհետ՝ ԼՀ) իրավասու մարմիններին՝ №09121816 քրեական գործով հետախուզվող ԿԼԱՐԱ ՍԵՐՅՈՒՄՅՈՒ ԵՆՈՔՅԱՆԻՆ քրեական հետապնդման ենթարկելու նպատակով ՀՀ իրավասու մարմիններին հանձնելու միջնորդությամբ:

12.12.2019թ. ՀՀ արտաքին գործերի նախարարությունից ստացված գրության համաձայն՝ ուղարկվում է ԼՀ-ում ՀՀ դեսպանության միջոցով ԼՀ Լյուբլինի դատարանից ստացված գրության պատճենը՝ Կլարա Ենոքյանի հանձնման գործընթացի վերաբերյալ: Գրությանը կից տրամադրվել է 1 էջից բաղկացած փաստաթուղթ՝ լեհերեն լեզվով:

Վերոգրյալի հիման վրա, նկատի ունենալով, որ ՄԱՐԻԱՄ ԿԱԴԱՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառնություններ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության 83-րդ հոդվածով, «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածով,

ՈՐՈՇԵՑԻ

1. ՀՀ արտաքին գործերի նախարարությունից ստացված՝ ԿԼԱՐԱ ԵՆՈՔՅԱՆԻ հանձնման գործընթացի վերաբերյալ փաստաթղթի հայերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ՄԱՐԻԱՄ ԿԱԴԱՅԱՆԻՆ (անձնագիր BA սերիայի №2096015, ՀՀ ԱՆ տեղեկանք № 25.12.2018թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թարգմանիչ հրավիրելու մասին

05 դեկտեմբերի 2019թ.

ք. Երևան

ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Ա. Մանուկյանս, ուսումնասիրելով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում քննվող ԵԿԴ/0331/01/17 (նախաքննական համարը՝ 58218317) քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2017 թվականի հունիսի 15-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 329.1 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 58209417 քրեական գործը, կատարվել է նախաքննություն:

2017 թվականի դեկտեմբերի 05-ին թիվ 58209417 քրեական գործից անջատվել է թիվ 58218317 քրեական գործը:

2017 թվականի դեկտեմբերի 06-ին Աննա Ռուբենի Դաբադյանին վերջնական մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 329.1 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2017 թվականի դեկտեմբերի 14-ին թիվ 58218317 քրեական գործն ուղարկվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան, ընդունվել է դատարանի վարույթ ԵԿԴ/0331/01/17 համարով, ընթանում է դատական քննություն:

2018 թվականի դեկտեմբերի 28-ին ՀՀ գլխավոր դատախազությունում ստացվել են Հունաստանի Հանրապետության իրավասու մարմիններին հասցեագրված իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդության կատարմամբ ստացված հունարեն նյութերը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարության լեզուն հայերենն է: (...) Քրեական դատավարությանը մասնակցող անձինք (բացառությամբ վկայի) դատավարական բոլոր փաստաթղթերը ներկայացնում են հայերեն կամ այլ լեզվով՝ հայերեն պատշաճ թարգմանությամբ: Նշված պահանջը չպահպանելու դեպքում դատավարական փաստաթղթերը քրեական վարույթն իրականացնող մարմինը չի քննարկում կամ չի թույլատրում, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց (...):

Ելնելով վերը շարադրվածից, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 54-րդ, 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. ԵԿԴ/0331/01/17 (նախաքննական համարը՝ 58218317) քրեական գործով Հունաստանի Հանրապետության իրավասու մարմիններին հասցեագրված իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդության կատարմամբ ստացված նյութերի հունարենից հայերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Սոնա Սամվելի Ազիզյանին (ՀՀ քաղաքացու անձնագիր՝ AR0206807, նոտարական գործողությունների որպես թարգմանիչ մասնակցելու մասին ՀՀ արդարադատության նախարարության 25.12.2018թ. տեղեկանք) և նրան պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանիչ իրավունքները և պարտականությունները:

2. Թարգմանչին նախազուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով քրեական պատասխանատվություն է նախատեսված ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար:

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում,
մինչդատական վարույթի օրինականության
նկատմամբ հսկողության վարչության
դատախազ

Ա. Մանուկյան

Ազգային ապե սրահում օրենսդր.,
ՀՀ Ք. Դատ. Օրենսգրքի 83-րդ
հոդվածի և ՀՀ Ք. Օրենսգրքի 338
հոդվածի խախտմանը: Դժ կամակերպ
և արաբական արձանները ինչ պարզ և
ճշմարտացի են: ՀՀ Ք. Օրենսգրքի
338-րդ հոդվածով Շաբաթյան
արաբական արձանները ճշմարտացի-
շարժված են:

Աննա Կոչարյան
05 դեկտեմբեր 2019 թ.





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՄԱՋՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՌԻ ԱՎԱՆ ԵՎ ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ շՐՋԱՆՆԵՐԻ ԴԱՏԱՄԱՋՈՒԹՅՈՒՆ

056, ք. Երևան, Բոլոյան փ. 1,
Հեռ. 63 14 22.

Հ. 033-18

«18» 12 2019 թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թարգման հրավիրելու մասին

Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազի տեղակալ, առաջին դասի խորհրդական Մ. Ա. Արամյանս.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018թ. մարտի 07-ին Բելառուսի Հանրապետության քննչական կոմիտեում 08.04.2010թ. ԲՀ քրեական օրենսգրքի 209-րդ հոդվածի 4-րդ մասով հարուցված թիվ 10011060984 քրեական գործն՝ ըստ մեղադրանքի Անդրանիկ Լևոնի Համբարձումյանի, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչությունից ստացվել է Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին, ընդունվել վարույթ և քրեական գործին շնորհվել է 17103918 համարը:

Քրեական գործի ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2010թ. փետրվարի 18-ին որոշում է կայացվել Անդրանիկ Լևոնի Համբարձումյան Բելառուսի Հանրապետության քրեական օրենսգրքի 209-րդ հոդվածի 4-րդ մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին և նույն օրը վերջինիս նկատմամբ հայտախարվել է հետախուզում, որպես որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2011թ. հունիսի 16-ին Անդրանիկ Համբարձումյանը ՀՀ տարածքում ձերբակալվել է և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը 30 օր ժամկետով:

2013թ. Փետրվարի 20-ին Անդրանիկ Համբարձումյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է և նույն օրը որոշում է կայացվել վերջինիս Բելառուսի Հանրապետության քրեական օրենսգրքի 209-րդ հոդվածի 4-րդ մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

Ստացված իրավական օգնություն ցույց տալու մասին հանձնարարականի հիման վրա 2013թ. մայիսի 14-ին Անդրանիկ Համբարձումյանին ՀՀ-ում մեղադրանք է առաջադրվել Բելառուսի Հանրապետության քրեական օրենսգրքի 209-րդ հոդվածի 4-րդ մասով:

Հաշվի առնելով, որ Անդրանիկ Լևոնի Համբարձումյանը ՀՀ քաղաքացի է, նրա հանձնումը Բելառուսի Հանրապետությանն՝ իր տարածքում կատարված հանցագործության համար քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով, հնարավոր չէ, ուստի քրեական գործն 2018թ. ուղարկվել է ՀՀ՝ Բելառուսի Հանրապետության տարածքում կատարած հանցագործության համար Անդրանիկ Համբարձումյանի նկատմամբ քեական հետապնդում իրականացնելու նպատակով:

2019թ. օգոստոսի 1-ին Անդրանիկ Լևոնի Համբարձումյանին Բելառուսի Հանրապետության քրեական օրենսգրքի 209-րդ հոդվածի 4-րդ մասով առաջադրված մեղադրանքը փոփոխվել, համապատասխանեցվել է ՀՀ գործող քրեական օրենսգրքին և նույն օրը նրան մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, հանրորեն վտանգավոր այն արարքի կատարման համար, որ նա 2008 թվականի հունիսի 24-ից մինչև 2009 թվականի սեպտեմբերի 5-ն ընկած ժամանակահատվածում գտնվելով Բելառուսի Հանրապետության Մինսկ քաղաքում, միասնական դիտավորությամբ ֆիզիկական և իրավաբանական անձանցից խարդախությամբ հափշտակել է առանձնապես խոշոր չափի գումարներ:

Անդրանիկ Համբարձումյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

Առաջադրված մեղադրանքում Անդրանիկ Համբարձումյանը հրաժարվել է որևէ դիրքորոշում հայտնել, ինչպես նաև հրաժարվել է իրեն առաջադրված մեղադրանքի էության շուրջ ցուցմունք տալ և պատասխանել առաջադրված հարցերին: Վերջինս նշել է, որ ինքը ինչպես Բելառուսի Հանրապետությունում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում չի խուսափել քննությունից և առհասարակ տեղյակ չի եղել, որ իր վերաբերյալ քրեական գործ է քննվում: Նշել է նաև, որ ինչպես Բելառուսի Հանրապետությունում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում ունեցել է մշտական բնակության վայր:

2019թ. սեպտեմբերի 30-ին Անդրանիկ Համբարձումյանն Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին է ներկայացրել դիմում, որով խնդրել է իր վերաբերյալ քրեական գործով վարույթը կարճել քրեական պատասխանատվության օրենքով նախատեսված վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով: Նշվածը պնդել է նաև ցուցմունքով:

Նկատի ունենալով, որ անհրաժեշտ է նշված քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը ուղարկել Բելառուսի Հանրապետություն իրավասու մարմիններին, ուստի նշված դատավարական փաստաթղթերը թարգմանելու համար քրեական գործով անհրաժեշտ է հրավիրել թարգման, որը տիրապետում է հայերեն և ռուսերեն գրավոր ու բանավոր լեզուներին և կարող է կատարել թարգմանություններ հայերենից ռուսերեն և հակառակը:


Վերոգրյալի հիման վրա ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության 15-րդ, 53-րդ, 83-րդ և 101-րդ հոդվածների պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 17103918 քրեական գործով որպես թարգման հրավիրել Արմինե Քաջիկի Մինասյանին /ծնված՝ 29.01.1986թ., անձնագիր՝ AN0213064, տրված՝ 24.07.2012թ., 004-ի կողմից/, ով ունի բարձրագույն կրթություն, ռուսերեն լեզվից թարգմանություններ կատարելու փորձ և որակավորում, ազատորեն տիրապետում է հայերեն և ռուսերեն գրավոր ու բանավոր լեզուներին և կարող է կատարել թարգմանություն, քրեական գործով չշահագրգռված անձ է:

2. Որոշման մասին հայտնել Արմինե Քաջիկի Մինասյանին և վերջինիս պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված պատասխանատվության մասին:

Վարչական շրջանների դատախազի տեղակալ, առաջին դասի խորհրդական՝



Մ.Արամյան

Որոշումն ինձ հայտնվել է, պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իմ իրավունքներն և պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանան՝

<< 18 >> 12 2013 թ.



ՈՐՈՇՈՒՄ

Թարգմանիչ հրավիրելու մասին

18.12.2019թ.

ք. Երևան

Շենգավիթ վարչական շրջանի դատախազության ավագ դատախազ Վ.Սիմոնյանս, ուսումնասիրելով թիվ 11125418 քրեական գործով ՀՀ ԱՆ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնից ստացված գրությունը և կից փաստաթուղթը,

ՊԱՐԶԵՑԻ՝

ՀՀ ՔԿ ԵՔՔԿ Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում քննված թիվ 11125418 քրեական գործն ըստ մեղադրանքի Վոլոդյա Մինասի Գասպարյանի ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի, 34-177-րդ հոդվածի 1-ին մասի, 34-329-րդ հոդվածի 1-ին մասի, 235-րդ հոդվածի 4-րդ մասի և 326-րդ հոդվածի հատկանիշներով, Գևորգ Գրիգորի Զիլավյանի ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի հատկանիշներով և Ավետիք Արմենի Հովհաննիսյանի ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի հատկանիշներով ուղարկվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ ըստ էության քննելու համար:

16.12.2019թ. ՀՀ ԱՆ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնից ստացվել է՝ ամբաստանյալ Գևորգ Գրիգորիի Զիլավյանի դատվածության մասին Ռուսաստան Դաշնության ՆԳՆ ԳԻՎԿ- տեղեկանքը, որը ուսերեն լեզվով է:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարության լեզուն հայերենն է»:

Նույն հոդվածի 4-րդ մասը նախատեսում է՝ «Քրեական դատավարությանը մասնակցող անձինք (բացառությամբ վկայի) դատավարական բոլոր փաստաթղթերը ներկայացնում են հայերեն կամ այլ լեզվով՝ հայերեն պարզաճ թարգմանությամբ: Նշված պահանջը չպահպանելու դեպքում դատավարական փաստաթղթերը քրեական վարույթն իրականացնող մարմինը չի քննարկում կամ չի թույլատրում, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց:»

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածո,

ՈՐՈՇԵՑԻ՝

Թիվ 11125418 քրեական գործով ամբաստանյալ Գևորգ Զիլավյանի դատվածության վերաբերյալ Ռուսաստան Դաշնության ՆԳՆ ԳԻՎԿ-ից տեղեկանքը թարգմանելու համար հրավիրել «Կրթարան Սոնա» սահմանափակ պատասխանատվությամբ

ընկերության թարգմանիչ Արմինե Մինասյանին (Անձնագիր AN 0213064, վավերական է մինչև 24.07.2022թ.):

Արմինե Մինասյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի պարտականություններին և իրավունքներին:

Արմինե Մինասյանին նախազգուշացնել քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Շենգավիթ վարչական շրջանի
դատախազության ավագ դատախազ




Վ.Սինոնյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ



Արմինե Մինասյան

« 18 » 12 2019 թ.

13

ՈՐՈՇՈՒՄ
Թարգմանիչ հրավիրելու մասին

11.12.2019թ.

ք. Երևան

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության պետի տեղակալ Լ.Մանուկյանս, ուսումնասիրելով հետախուզվող ՌՈՒԱՆԴԻ ՇՈԹԱՅԻ ԱԶՈՎԻ (АЗОВ РОЛАНДИ ШОТАЕВИЧ, ROLANDI AZOV) վերաբերյալ թիվ 21/32-420-19 վարույթի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) իրավասու մարմինների կողմից հետախուզվող ՌՈՒԱՆԴԻ ՇՈԹԱՅԻ ԱԶՈՎԸ 25.11.2019թ. հայտնաբերվել և ձերբակալվել է ՀՀ իրավապահ մարմինների կողմից և այդ մասին հայտնվել է ՌԴ իրավասու մարմիններին:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 26.11.2019թ. որոշմամբ Ռ.Շ. ԱԶՈՎԻ նկատմամբ կիրառվել է ժամանակավոր կալանավորում՝ 40 օր ժամկետով:

10.12.2019թ. ՌԴ գլխավոր դատախազությունից ստացվել է Ռ.Շ. ԱԶՈՎԻՆ ՌԴ իրավասու մարմիններին հանձնելու մասին միջնորդությունը և կից փաստաթղթերը՝ ռուսերեն լեզվով:

Առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 478³-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերը՝ հիշյալ հոդվածի համաձայն Ռ.Շ. ԱԶՈՎԻ նկատմամբ հանձնելու համար կալանավորելու մասին միջնորդություն դատարան ներկայացնելու համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի՝ թարգմանիչը պարտավոր է՝ [...] ստորագրությամբ հաստատել [...] քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը:

Նկատի ունենալով այն, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն իսկ ԱՐՄԻՆԵ ՄԻՆԱՍՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով, 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Ռ.Շ. ԱԶՈՎԻ հանձնման մասին ՌԴ գլխավոր դատախազության միջնորդության հայերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ԱՐՄԻՆԵ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ (անձնագիր AN սերիայի

№0213064, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 09.07.2012թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Միջազգային-իրավական

համագործակցության վարչության պետի տեղակալ



Լ. Մանուկյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝

ԱՐՄԻՆԵ ՄԻՆԱՍՅԱՆ



11.12.2019թ.

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

11.12.2019թ.

ք. Երևան

Ես, ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության պետի տեղակալ Լ.Մանուկյանս, ստանալով ՀՀ գլխավոր դատախազի կարգադրությունը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ Ու.Ու. ՍԱՄԱՐՈՎԻ իրավունքն ապահովելու վերաբերյալ կարգադրությունը և ուսումնասիրելով թիվ 21/32-870-19 վարույթի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Ուզբեկստանի Հանրապետության (ՈւՀ) իրավասու մարմինների կողմից հետախուզվող Ու.ՏԿՈՒՐ Ու.ԼՄԱՍԻ ՍԱՄԱՐՈՎԸ (УТКУР УЛМАСОВИЧ САМАРОВ, 26.08.1983թ.ձ.) 01.10.2019թ. հայտնաբերվել և ձերբակալվել է ՀՀ իրավապահ մարմինների կողմից և այդ մասին հայտնվել է ՈւՀ իրավասու մարմիններին:

10.12.2019թ. որոշում է կայացվել Ու.Ու. ՍԱՄԱՐՈՎԻ հանձնումը ՈւՀ իրավասու մարմիններին թույլատրելու մասին:

ՀՀ գլխավոր դատախազի նույն օրվա կարգադրությամբ հանձնարարվել է ապահովել Ու.Ու. ՍԱՄԱՐՈՎԻ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավունքի իրացումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ թարգմանիչը պարտավոր է ստորագրությամբ հաստատել [...] քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը:

Նկատի ունենալով, որ Ու.Ու. ՍԱՄԱՐՈՎԸ չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, իսկ ԱՐՄԻՆԵ ՄԻՆԱՍՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնահասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով և 478.4-րդ հոդվածի 2-րդ մասով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Ու.Ու. ՍԱՄԱՐՈՎԻ հանձնման թույլատվության վերաբերյալ որոշման ռուսերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես

Թարգմանիչ հրավիրել ԱՐՄԻՆԵ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ (անձնագիր AN սերիայի №0213064, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 09.07.2012թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Միջազգային-իրավական

համագործակցության վարչության պետի տեղակալ



Լ. Մանուկյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝

ԱՐՄԻՆԵ ՄԻՆԱՍՅԱՆ

11.12. 2019թ.



ՈՐՈՇՈՒՄ

Թարգմանիչ հրավիրելու մասին

19 դեկտեմբերի 2019թ.

ք. Արուսյան

Կոտայքի մարզի դատախազության ավագ դատախազ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Հ.Հ.Մովսեսյանս, ուսումնասիրելով մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 20196419 քրեական գործն՝ ըստ մեղադրանքի Մարինա Վլադիմիրի Անանինայի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով

ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Արուսյանի քննչական բաժնում քննվող թիվ 20196419 քրեական գործի նախաքննությամբ պարզվել և հիմնավորվել է, որ Երևան քաղաքի բնակչուհի Մարինա Վլադիմիրի Անանինան 2019 թվականի օգոստոսի 15-ին իր ծանոթ Սեյրան Բորիսի Պետրոսյանի հետ միասին, վերջինիս կողմից վարած «Օպել» մակնիշի 360L696 պետհամարանիշի ավտոմեքենայով մեկնել են Կոտայքի մարզի Գառնի գյուղի «Գառնու ձոր» կոչվող տարածք և միասին ժամանակ անցկացրել: Նույն օրը՝ ժամը 18:00-ի սահմաններում, Մարինա Անանինան գտնվելով հիշյալ ավտոմեքենայի առջևի նստատեղին, Սեյրան Պետրոսյանի կողմից իր և մայրիկի հասցեին հայիոյանք հնչեցնելու հարցի շուրջ ծագած վիճաբանության ընթացքում, մարմնական վնասվածք պատճառելու հանկարծակի ծագած դիտավորությամբ, քննությամբ չպարզված դանակով հարվածել է Սեյրան Պետրոսյանի որովայնի միջնամասին, վերջինիս առողջությանը պատճառելով ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող:

Վերոգրյալ արարքը կատարելու համար Մարինա Վլադիմիրի Անանինային 09.10.2019 թվականին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

2019 թվականի դեկտեմբերի 16-ին թիվ 20196419 քրեական գործով կազմվել է մեղադրական եզրակացությունը և քրեական գործի հետ ուղարկվել Կոտայքի մարզի դատախազություն:

Նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից 2019 թվականի դեկտեմբերի 18-ին հաստատվել է թիվ 20196419 քրեական գործով մեղադրական եզրակացությունը և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի կարգով քրեական գործն ուղարկվել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին:

Նախաքննությամբ պարզվել է, որ թիվ 20196419 քրեական գործով մեղադրյալ Մարինա Անանինան չի տիրապետում հայերենին, այլ տիրապետում է ռուսերենին:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության լեզուն հայերենն է:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի համաձայն՝ քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին և պաշտպանին հանձնվում են թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները:

Հաշվի առնելով, որ Արմինե Մինայանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի մայիսի 04-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ, 277-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. թիվ 20196419 քրեական գործով քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալ Մարինա Անանիանային մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների ուսերեն լեզվով հաստատված թարգմանությունները հանձնելու համար, դրանց ուսերեն լեզվի թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Արմինե Մինասյանին /անձնագիր՝ AF0479573, տրված՝ 03.07.2002թ., 004-ի կողմից, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 09.07.2012թ./ և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքներին և պարտականություններին:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով կամ ազատարկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Մարզի դատախազության
ավագ դատախազ

Հ.Մովսեսյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն ու պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝  « 19 » դեկտեմբերի 2019թ.